ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2017 թ. թիվ 14 /1747/

37. << Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> ՀՀ Օրենքի նախագծի քննարկում

Լսելով և քննարկելով <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> ՀՀ Օրենքի նախագիծը, ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Ելնելով արված դիտողություններից և առաջարկություններից՝ նոր օրենքի նախագիծը ներկայացված տեսքով հանել շրջանառությունից: Միևնույն ժամանակ, փաստել, որ 2000թ. ընդունված ՀՀ օրենքը՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», որոշակի փոփոխություններ կատարելուց հետո կարելի է դարձնել միանգամայն ժամանակին համահունչ (առաջարկություններն ու դիտողությունները կցվում են):

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Նախագահության առաջարկություններն ու դիտողությունները «ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ Օրենքի նախագծի վերաբերյալ

Լսելով և քննարկելով նախագիծը՝ ՀՀ ԳԱԱ Նախագահությունը նշում է, որ իր կարգավորման առարկայով օրենքի նախագիծը հիմնականում սկզբունքների, խնդիրների, գիտական քաղաքականության ուղղությունների թվարկում է, ինչպես նաև եզրույթների բացատրություն: Նախագիծը պարունակում է մի շարք հեղափոխական նորամուծություններ, որոնք, մեր կարծիքով, ժամանակավրեպ են, իսկ պրակտիկայում նրանց կիրառման համար առաջարկվող լուծումները՝ վիճահարույց:

Ընդհանուր բնույթի դիտողություններ

1. Օրենքի նախագծի մի շարք հոդվածներում (հոդված 3, հոդված 5, հոդված 6) գործածվում է «իրավասություններ» հոգնակի թվով եզրույթը: Իրավասությունը հավաքական հասկացություն է և ենթադրում է լիազորությունների ու պարտականությունների ամբողջություն, այսինքն՝ կառավարությունը գիտության ոլորտում ունի մի շարք լիազորություններ, որոնց հավաքական ամբողջությունը կազմում է նրա իրավասությունն այդ ոլորտում: Հետևաբար, նախագծի հեղինակները պետք է գործածեն որոշ տեղերում «իրավասություն», իսկ մյուսներում՝ «լիազորություն» եզրույթները: Այս տեսանկյունից նախագծի մի շարք հոդվածներ խմբագրման կարիք ունեն:

2. Նախագծում նշված գիտության զարգացման նպատակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ միտված են բնական ու ճշգրիտ գիտությունների ոլորտներին՝ չհաշված եզակի բացառությունները (օրինակ՝ հայագիտության զարգացմանը նպաստելը)՝ անուշադրության մատնելով սոցիալական և հումանիտար գիտությունները: Կարծում ենք, որ հասարակության համար կարևոր խնդիր է նաև իրավական, ժողովրդավարական պետության կայացումը, համընդհանուր և միասնական օրինականության ռեժիմի հաստատումը Հայաստանում: Հետևաբար, երևի թե, կարիք կա որպես պետական քաղաքականության նպատակ ամրագրել այդ խնդիրը՝ հետևյալ ձևակերպմամբ. ***«ժողովրդավարական իրավական պետության կայացմանը, օրինականության ու իրավական մշակույթի հաստատմանը նպաստելը»:***

3. Անհասկանալի է հեղինակների առաջարկը ասպիրանտուրան երկարացնել մինչև 5 տարի: Աշխարհում նկատվում է կրթության ժամկետների նվազեցման միտում, Հայաստանում ցանկություն կա դրանք ավելացնել: Կարծում ենք, որ դա պայմանավորված է մեկ գիտական աստիճանի ներմուծման առաջարկով:

Արդեն մի քանի տարի է, որ տարբեր նախաձեռնություններում այս հարցն արծարծվում է: Ներկայումս գոյություն չունի որևէ միջազգային պարտադիր ակտ, որի ուժով պետք է դա արվի: Բացի այդ, եվրոպական երկրներում ևս չկա հարցի կարգավորման միասնականություն, իսկ ԱՊՀ և ԵԱՏՄ երկրներում, որոնց անդամն է Հայաստանի Հանրապետությունը, պահպանված է երկաստիճան համակարգը:

Գիտական աստիճանների հավասարեցումը, ըստ էության, նշանակում է համահարթեցում, իսկ ցանկացած համահարթեցում, բացի այն, որ հանգեցնում է գիտության ոլորտում պահանջների նսեմացման, այլև կարող է հանգեցնել նաև որոշակի անարդարությունների, և անցումը ակնհայտորեն կբերի պետական բուջեի ավելորդ և չարդարացված ծախսերի:

Ենթադրում ենք, որ գիտության թեկնածուների որոշակի շրջանակ միանգամից ուզում է դառնալ դոկտոր և անընդհատ աշխատում է այդ ուղղությամբ, իսկ լիազոր մարմինները հաճախ տուրք են տալիս դրան:

4. Հստակ չեն գիտական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները: Նախ՝ կա անհամամասնություն. բազմաթիվ իրավունքներ և միայն 2 պարտականություն, երկրորդ՝ պարտականությունների ձևակերպումները վերարտադրում են ՌԴ-ի օրենքի ձևակերպումները և համապատասխանեցված չեն ՀՀ 2015թ. Սահմանադրության ձևակերպումներին:

5. Օրենքի նախագծում ընդհանրապես չեն արծարծվում գիտական պաշտոնները՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող, առաջատար գիտաշխատող, գլխավոր գիտաշխատող: Մինչդեռ, որպես **գիտական կոչում,** դիտարկվում են **պրոֆեսորի** և **դոցենտի** պաշտոնները, որոնք իրենց էությամբ ավելի շատ գիտամանկավարժական գործառույթներ են արտացոլում: Իրականում գիտական կոչումը համապատասխանում է ավագ գիտաշխատողի (ա.գ.ա.), առաջատար գիտաշխատողի (առ.գ.ա.) և գլխավոր գիտաշխատողի (գ.գ.ա.) գործառույթներին, որոնց մասին պետք է համապատասխան ճշտում կատարվի նախագծում:

6. Նախագծում անհասկանալի է ձևակերպված «հետազոտական համալսարան» հասկացությունը: Արդյո՞ք այն համապատասխանեցված է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի հետ կամ ներկայումս պատրաստվող «Բարձրագույն կրթության մասին» օրենքի նախագծի հասկացությունների հետ: Նշված փաստաթղթերում ընդհանրապես այդ հասկացողությունը բացակայում է:

Առաջին անգամ «հետազոտական համալսարան» հասկացությունը ընդգրկվեց Կարնեգիի դասակարգման մեջ 1994թ.՝ որպես, այսպես կոչված, <<տիտղոս>>, որը շնորհվում էր այն հաստատություններին, որոնք բավարարում էին հինգ որոշակի պայմանների, որոնցից նշենք 2-ը. մեկը՝ դրա միջազգային ճանաչումն էր, մյուսը՝ պետության կողմից տրվող ֆինանսավորումը (40մլն ԱՄՆ դոլարից ոչ պակաս): Հետագայում Կարնեգիի դասակարգման մեջ կատարվեցին փոփոխություններ, որոնք ավելի խստացրին պահանջները: ԱՄՆ-ում ներկայումս այդ տիտղոսին արժանացել են մի քանի հարյուր, իսկ ՌԴ-ում՝ 28 միջազգային համբավ ունեցող կազմակերպություններ, որոնք բավարարում են պահանջվող չափորոշիչներին: ՀՀ ոչ մի բուհ նշված տիտղոսին արժանանալու չափորոշիչներին չի բավարարում, առավել ևս, եթե փորձենք նույնիսկ գործող բուհերը վերաձուլել և ստեղծել մեկ բուհ, միևնույնն է, այդ տիտղոսը կմնա անհասանելի:

7. Նախագծի առանցքային և ընդգծված կարևոր կետերից պետք է լիներ երկրի ռազմավարական, սոցիալ-տնտեսական զարգացման շահերին և երկարաժամկետ խնդիրներին համապատասխան գիտության ոլորտի համար պետական պատվերի ձևավորումը՝ որպես ծրագրերի ֆինանսավորման հիմք: Սակայն այդ գաղափարը «Նախագծում» իսպառ բացակայում է:

<u>Առաջարկությունների վրա հիմնված դիտողություններ</u> (շարադրված են նախագծի ընդգրկված հոդվածների հերթականությամբ).

Հոդված 2

- 1 կետի 3) ենթակետը վերաշարադրել. <<**հիմնարար գիտական հետազոտություն**՝ բնության, մարդու, հասարակության զարգացման

օրինաչափությունների մասին տեսական կամ փորձարարական գիտական գործունեություն>>, քանի որ 1) ենթակետում արդեն սահմանված է << գիտական գործունեություն>> եղրույթը:

- Նույն հիմնավորմամբ 1 կետի 4) ենթակետը վերաշարադրել. << **կիրառական գիտական հետազոտություն**՝ գործնական նպատակների իրականացման և կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն:

- 1 կետի 5) ենթակետում <<առողջության պահպանման>> բառակապակցությունից հետո ավելացնել <<հասարակության զարգացման>> բառակապակցությունը:

- 1 կետի 11) ենթակետը վերաշարադրել << **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա**՝ իրավաբանական անձ հանդիսացող, հատուկ կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որի կազմակերպական-իրավական ձևը և կարգավիճակը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

- 1 կետի 15) ենթակետում ենթադրվում է, որ գիտահետազոտական աշխատանք կարող է իրականացնել միայն գիտական աստիճան ունեցող ֆիզիկական անձը, ինչը հակասում է ողջ բազմամյա գիտական պրակտիկային: Գիտական աստիճանը, որպես կանոն, ձեռք է բերվում գիտական ու հետազոտական աշխատանքներ կատարելու արդյունքում: Հետևաբար, գիտաշխատողը (հատկապես՝ երիտասարդ) կարող է գիտական աստիճան չունենալ: Այս տեսանկյունից բոլորովին անհասկանալի է, թե ինչով է զբաղվում ասպիրանտը: Գիտական աշխատող եզրույթի բացատրությունը տալուց պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրությունն օգտագործում է նաև «գիտնական» եզրույթը, հետևաբար, անհրաժեշտ է ձևակերպել նաև այդ եզրույթի բացատրությունը և որոշել դրա հարաբերակցությունը գիտաշխատող եզրույթի հետ:

Առաջարկվում է վերաշարադրել <<**գիտական աշխատող**՝ գիտական, գիտաուսումնական կամ գիտաարտադրական կազմակերպություններում գիտահետազոտական աշխատանք իրականացնող առնվազն մագիստրոսի կրթական որակավորում ունեցող և գիտական արդյունք ձեռքբերող ֆիզիկական անձ>>:

- 1 կետի 17) ենթակետում <<**գիտական կազմակերպության վարչական պաշտոն**>> ձևակերպված եզրույթը պետք է վերաբերի միայն <<պետական գիտական կազմակերպություններին>>: Նախագծում, տրված ձևակերպման համաձայն, ստացվում է, որ վարչական պաշտոնների ցուցակը իր մեջ ներառում է բոլոր գիտաշխատողներին՝ ընդհուպ մինչև կրտսեր գիտաշխատողներին:

ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտը ոչ մի կերպ չի հստակեցնում <<գիտահետազոտական կազմակերպության վարչական պաշտոն>> հասկացությունը, բացառությամբ՝ կազմակերպությունների տնօրենների, որոնց դեպքում ներկայումս հստակ գործում է ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքը: Կարծում ենք, որ, մասնավորապես, տնօրենի հետ մեկտեղ վարչական պաշտոններ կարող են համարվել ընդհանուր հարցերով փոխտնօրենը, հաշվապահությունը, արհեստանոցները, կոնստրուկտորական բյուրոները և այլն: Իրականում, տնօրենի պաշտոնը նույնպես ոչ թե զուտ վարչական պաշտոն է, այլ գիտավարչական:

Առաջարկվում է հետևյալ սահմանումը՝ **<<պետական գիտական կազմակերպության վարչական պաշտոններ՝** գիտական կազմակերպության գործունեության քաղաքականության մշակման և իրականացման ղեկավարման համար պատասխանատու պաշտոններ, որոնց ցուցակը հաստատվում է հիմնադրի կողմից>>:

- 1 կետի 18) ենթակետում սահմանված չէ <<գիտամանկավարժական բնագավառի աշխատող>> եզրույթը:

- 1 կետի 21) ենթակետում հանել <<տնտեսության>> բառը և վերաշարադրել. <<**գիտության ոլորտ**՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումն ապահովող ոլորտ>>:

- 1 կետի 22) ենթակետում <<եղանակները>> բառը փոխարինել <<լիազորությունները>> բառով և վերաշարադրել. <<**գիտության ոլորտում պետական քաղաքականություն**՝ պետության քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտության ոլորտի նկատմամբ, որոշում գիտության ոլորտում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և լիազորությունները>>:

Հոդված 3

- 1 կետի 3) ենթակետը վերաշարադրել. <<գիտության ոլորտի լիազոր մարմնի իրավասությունների սահմանումը>>:

Հոդնած 4

- 1 կետի 1) ենթակետը վերաշարադրել. <<գիտելիքահենք տնտեսության և քաղաքակիրթ հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծումը>>.

- 1 կետի 2) և 4) ենթակետերը միացնել և վերաշարադրել. <<տնտեսության զարգացման նպատակով գիտական արդյունքի ներդրման խրախուսումը, մասնավոր հատվածի կողմից ներդրումների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, ինովացիոն գործունեությանն աջակցումը>>:

- 1 կետի 3) ենթակետը վերաշարադրել. <<երկրի պաշտպանության և անվտանգության մակարդակի բարձրացմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող գիտական հետազոտությունների իրականացման առաջնահերթության ապահովումը>>:

- 1 կետի 9) և 10) ենթակետերը միացնել և վերաշարադրել. <<գիտական, գիտատեխնիկական, ինովացիոն գործունեության, կրթական համակարգի և արտադրության արդյունավետ փոխգործակցության և ինտեգրման ապահովումը>>.

- 1 կետի 15) ենթակետը վերաշարադրել. << մարդու, հասարակության, երկրի պաշտպանությանն ու անվտանգությանն աջակցելը>>:

- 1 կետի 19) ենթակետը վերաշարադրել. <<գիտության ոլորտի և գիտնականի հասարակական հեղինակության և գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի գրավչության բարձրացումը>>:

- 2 կետի 1) ենթակետը վերաշարադրել. <<գիտության՝ որպես պետության տնտեսության հիմքի և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում գիտականորեն հիմնավորված մոտեցումների առաջատար դերի ընդունումը>>:

Հոդված 5

- 1 կետի 1) ենթակետը վերաշարադրել. <<գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության մշակումը, հաստատումը և իրականացումը>>:

- 1 կետի 2) ենթակետը վերաշարադրել. <<գիտության ոլորտի լիազոր մարմնի կարգավիճակի սահմանումը>>:

- 1 կետի 3) ենթակետը վերաշարադրել. <<Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների, հայագիտության զարգացման ծրագրերի հաստատումը>>:

- 1 կետի 5) ենթակետը վերաշարադրել. <<պետական գիտական կազմակերպությունների, գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների և ազգային գիտական լաբորատորիաների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը, ինչպես նաև այդ գործընթացների չափորոշիչների ու կարգերի հաստատումը>>:

- 1 կետի 6) ենթակետը վերաշարադրել. <<ասպիրանտական և հայցորդական համակարգերում ուսուցման կարգի հաստատումը>>:

- 1 կետի 7) և 8) ենթակետերը միացնել և վերաշարադրել. <<գիտական աստիճանների՝ գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի, շնորհման և կոչումների՝ դոցենտի, պրոֆեսորի, ավագ գիտաշխատողի, առաջատար գիտաշխատողի և գլխավոր գիտաշխատողի, հաստատման ու համապատասխան դիպլոմներով ամրագրման կարգերի հաստատումը>>:

- 1 կետի 11) ենթակետը վերաշարադրել. <<գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման կարգերի սահմանումը և հաստատումը>>:

Հոդված 6

- 1 կետի 1) - 7) ենթակետերի վերջում ավելացնել՝ <<ՀՀ ԳԱԱ հետ համատեղ>>:

- 1 կետի 9) ենթակետի սկզբում ավելացնել <<ՀՀ ԳԱԱ հետ համատեղ>> բառակապակցությունը և վերաշարադրել. <<ՀՀ ԳԱԱ հետ համատեղ գիտության ոլորտում իրավական ակտերի նախագծերի մշակումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն>>:

- 1 կետի 9) ենթակետի դ, կետը վերաշարադրել. <<գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի և չափանիշների>>:

Հոդված 7

- 1 կետում թվարկել սուբյեկտներին, ինչպես դա արված է գործող օրենքում. <<Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են գիտնականները, գիտական աշխատողները, գիտամանկավարժական բնագավառի աշխատողները, գիտական (ներառյալ՝ հասարակական) կազմակերպությունները, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները>>:

- 2 կետը շատ աղքատիկ է գրված, մասնավորապես, նշված չեն պետության կողմից ֆինանսավորման և սոցիալական հարցերի երաշխավորումները:

Հոդված 8

- 1 կետի 1) ենթակետից հանել <<գիտական ու ճարտարագիտատեխնիկական աշխատողների ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում>> բառերը, քանի որ հակասում է նախագծի 5 հոդվածի 1 կետի 9) ենթակետին: Վերաշարադրել՝ <<ինքնուրույն է գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության կազմակերպման, հարցում>>:

- 1 կետի 6) ենթակետը միավորել 4 կետի հետ և վերաշարադրել. <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է անդամակցել Հայաստանի Հանրապետության և միջազգային կազմակերպություններին ու միավորումներին, մասնակցել միջազգային կամ օտարերկրյա պետությունների գիտական և գիտատեխնիկական ծրագրերին, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացնել համատեղ գիտական աշխատանքներ և ծրագրեր օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքել պայմանագրեր և համաձայնագրեր>>:

Հոդված 9

- 1 կետում <<կամ>> բառը փոխարինել <<և>>-ով և վերաշարադրել. <<Պետական գիտական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը և գործադիր մարմինը (տնօրեն, ռեկտոր, նախագահ և այլն): Պետական գիտական կազմակերպության կանոնադրությամբ կարող է նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում>>:

Հոդված 10

- 1 կետի 5) և 7) ենթակետերը միավորել և վերաշարադրել. <<ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները, եթե դրանք չեն պարունակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության>>.

- 2 կետում ավելացնել նոր՝ 3) ենթակետ. << չզբաղվել գրագողությամբ և տպագրության ներկայացնել հավաստի գիտական արդյունքներ>>:

Հոդված 11

- 1 կետը վերաշարադրել. <<Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերը ասպիրատուրան է և հայցորդությունը>>:

- 2 կետը վերաշարադրել. <<Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ՝ ըստ գիտական, գիտատեխնիկական և գիտաուսումնական գործունեության մասնագիտությունների և բնագավառների>>:

- 3 կետը վերաշարադրել. <<Գիտության թեկնածուի գիտական աստիճանը, որպես կանոն, շնորհվում է ասպիրանտական կամ հայցորդական ուսումը ավարտած, անհրաժեշտ կրեդիտները հավաքած, քննությունները և ստուգարքները հանձնած ու համապատասխան գիտական թեզ պաշտպանած անձին: Ասպիրանտական ուսուցման ժամկետը սահմանվում է նվազագույնը 3 տարի: Գիտության դոկտորի գիտական աստիճանը սահմանվում է համապատասխան մասնագիտությամբ դոկտորական ատենախոսական թեզ պաշտպանած անձին>>:

- 4 կետը վերաշարադրել. <<Պրոֆեսորի գիտական կոչումը շնորհվում է գիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած հինգ թեկնածուական թեզերի ղեկավար են: Դոցենտի գիտական կոչումը շնորհվում է գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր

իրենց գործունեության վերջին երեք տարիներին զբաղվել են գիտամանկավարժական գործունեությամբ>>:

- 5 կետը վերաշարադրել. <<Գիտական աստիճանները շնորհում են գիտահետազոտական կազմակերպություններին կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր մասնագիտական խորհուրդները և հաստատվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից>>:

- 6 կետը վերաշարադրել. <<Գիտական կոչումները շնորհվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից՝ գիտահետազոտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների ներկայացմամբ>>:

Հոդված 12

- 2 կետը վերաշարադրել. <<Պետական գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն անցկացվում է առնվազն երեք տարին մեկ անգամ՝ պաշտոնի հավակնորդի գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գիտաչափական գնահատման հիման վրա՝ համաձայն լիազոր մարմնի կողմից հաստատված կարգի>>:

Հոդված 13

- 1 կետը վերաշարադրել. <<Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և կենսաթոշակի ձևավորման համակարգերը պետք է նպաստեն գիտության ոլորտի և գիտնականի հեղինակության բարձրացման ու գիտական ներուժի արդյունավետ վերարտադրության գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար և թոշակի անցնելուց հետո ապահովեն գիտնականի արժանավայել կենսամակարդակը>>:

- 3 կետը վերաշարադրել. <<Պետությունը, տարիքային կենսաթոշակի իրավունք, պետական գիտական կազմակերպություններում գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 20 տարվա ստաժ և գիտական աստիճան ունեցող անձանց՝ 63 տարին լրանալու ու թոշակի անցնելու դեպքում, կենսաթոշակից բացի, գիտական աստիճանի առկայության դեպքում տալիս է

ամենամսյա լրավճար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողներին համապատասխան գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով>>:

Հոդված 14

- 3 կետի 1) ենթակետը վերաշարադրել. <<բազային ֆինանսավորումը հատկացվում է պետական գիտական կազմակերպություններին՝ հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման նպատակով>>:

- 3 կետի 2) ենթակետը վերաշարադրել. <<նպատակային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և հատկացվում է գիտական կազմակերպություններին՝ գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղություններին համապատասխանող, պետության կողմից պետական պատվերի շրջանակներում ընդգրկված համալիր ծրագրերի իրականացման նպատակով: Նպատակային ծրագրերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով>>:

Հոդված 16

- 1 կետը վերաշարադրել. <<Սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը>>:

<u>Ամփոփում</u>

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ ՀՀ ԳԱԱ Նախագահությունը գտնում է, որ Նախագիծի ներկայացված տարբերակը պարունակում է բազմաթիվ արմատական թերություններ, ներկայացման գործընթացում նկատվում է որոշակի չարդարացված շտապողականություն:

Մի քանի հեղափոխական առաջարկները՝ գիտական մեկ աստիճանին անցնելու, ԲՈՀ-ը վերացնելու և այլ գործառույթները դիտարկում ենք ժամանակավրեպ, պատմական ավանդույթներին հակասող լուծումներ, որոնց հետևանքները կարող են լինել անկանխատեսելի: Այս կարգի առաջարկները անպայման պահանջում են կից ներկայացնել հիմնավորում, թե արդյոք դա բարձրացնում է գիտական հետազոտությունների արդյունավետությունը և որքանով: Նախագծում նման հիմնավորումները բացակայում են: Առավել ևս, Նախագծին կից տեղեկանքում փաստագրված է՝ <<«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում>>: Իրականում, ուղիղ հակառակն է: Կան բազմաթիվ օրենքներ, որոշումներ, ենթաօրենսդրական ակտեր, նորմատիվ իրավական փաստաթղթեր, որոնք կառուցված են գիտական կոչումների տարբերակման վրա, օրինակ՝ կրթական, դատաիրավական, փաստաբանական և շատ այլ ոլորտներում: